ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼ ՆԵՐԴՆԵԼՈՒՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

05-ը նոյեմբերի, 2024թ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Կանայք և գլոբալ անվտանգային ճարտարապետությունը» մտակենտրոնի կողմից՝ «Համապարփակ անվտանգություն և դիմակայունություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Էստոնիայի Հանրապետության աջակցությամբ և համաֆինանսավորմամբ՝ Էստոնիայի զարգացման համագործակցության և մարդասիրական օգնության միջոցներից, Ֆինլանդիայի Հանրապետության աջակցությամբ և համաֆինանսավորմամբ և Շվեդիայի Թագավորության աջակցությամբ:

1 | Համատեքստ

Հարաբերական կայունության և կանխատեսելիության տարրեր պարունակող երբեմնի միաբևեռ և/կամ երկբևեռ աշխարհակարգն իր տեղը զիջում է անորոշության և անկանխատեսելիության տարրեր պարունակող և ձևավորման փուլում գտնվող բազմաբևեռ աշխարհակարգին: Միջազգային հարաբերություններում երբեմնի համաձայնեցված վարքագծի կանոններն ու սկզբունքները կորցրել են իրենց կենսունակությունը, իսկ նորերի ձևավորման և ամրապնդման համար ընթանում է անզիջում պայքար՝ թե՛ տարածաշրջանային, և թե՛ գլոբալ հարթություններում: Սույն անորոշության և անկանխատեսելիության գլոբալ միջավայրում առավել խոցելի են փոքր, բնական դիմակայունությունից զուրկ, ժողովրդավարական արժեքներ դավանող և Եվրոպական համակարգից դուրս գտնվող պետությունների դիրքերը:

Ավանդական և ոչ ավանդական մարտավարական հնարքներ (ապատեղեկատվություն, կիբերհարձակումներ, տնտեսական հարկադրանք և այլն) համատեղող հիբրիդային սպառնալիքները լղոզում են պատերազմի ու խաղաղության սահմանները՝ մարտահրավեր նետելով անվտանգության ավանդական միջոցառումներին: Ժողովրդավարությունները, ռազմական կարողությունները անվտանգության ապահովման հիմնական գործիքներից մեկը դիտարկելուն զուգընթաց, ձգտում են ընդլայնել անվտանգության ապահովման միջոցների շրջանակը՝ ժամանակակից բազմամակարդակ անվտանգային սպառնալիքների դեմ պայքարելու, անվտանգության փոփոխվող միջավայրին ադապտացվելու և ժողովրդավարության կենսունակությունը ապահովելու համար:

Ադրբեջանի կողմից 2020թ.-ին սանձազերծած Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, անկախությունից ի վեր գործող Հայաստանի անվտանգային համակարգը շարունակաբար ի ցույց է դնում իր ժամանակավրեպությունը, ինչպես նաև անկարողունակությունը՝ արձագանքելու, դիմակայելու և պայքարելու ՀՀ ազգային անվտանգության շահերին սպառնացող ներքին և արտաքին կոնվենցիոնալ և հիբրիդային սպառնալիքներին: Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական բարեփոխումների գործընթացը զուգորդվում է տարածաշրջանում «Հակաարևմտյան տարածաշրջայնացման» քաղաքականությունների ամրապնդմամբ և ձևաչափերի ընդլայնմամբ: Ադրբեջանի՝ Հայաստանի դեմ շարունակվող նվաճողական քաղաքականությունն, ու հայ-ռուսական միջպետական հարաբերություններում ահագնացող ճգնաժամը զուգորդվում են հետզհետե խորացող ռուս-ադրբեջանական ռազմավարական փոխգործակցությամբ: Ադրբեջանի առավելապաշտական դիրքորոշումները հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում վկայում են վերջինիս՝ հակամարտության շարունակականության ապահովմանը միտված դիրքավորման մասին: Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրմանը միտված բանակցությունների հավանական ձախողումը մշուշոտ է դարձնում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, ՀՀ կառավարության կողմից ներկայացված Խաղաղության խաչմերուկ նախագծի իրականացման, Հայաստանի՝ Ռուսաստանից տնտեսական կախվածության թուլացման, Հայաստանի տնտեսության բազմազանեցման և, երկարաժամկետ հեռանկարում, ավտորիտար ռեժիմների հանդեպ դիմակայունության ամրապնդման հեռանկարները:

Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետության կայուն, անվտանգ և ժողովրդավարական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է անվտանգությունը համապարփակ դիտարկելուն և ՀՀ համապարփակ անվտանգության հայեցակարգ մշակելուն զուգահեռ ձևավորել Համապարփակ անվտանգության կառավարման մոդել: Սույն մոտեցումը հնարավորություն կընձեռի երկարաժամկետ հեռանկարում ձևավորել հայաստանյան այնպիսի հասարակություն, որը ոչ միայն պաշտպանված կլինի տարբեր սպառնալիքներից, այլ նաև կլինի դիմակայուն, միասնական՝ և՛ կոնվենցիոնալ, և՛ հիբրիդային մարտահրավերների առջև:

2 | Համապարփակ անվտանգության հակիրճ նկարագիրը

Համապարփակ անվտանգությունը՝ որպես հոլիստիկ մոտեցում, իր մեջ ներառում է անվտանգության ասպեկների լայն շրջանակ՝ ռազմական, տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական, էներգետիկ, մարդկային և այլն: Համապարփակ անվտանգության փիլիսոփայության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ մեկ ոլորտի խոցելիությունը կարող է ազդել ողջ ազգային անվտանգության վրա, հետևաբար անհրաժեշտ է ստեղծել անպիսի փոխկապակցված անվտանգային շրջանակ, որն ի վիճակի կլինի արդյունավետ արձագանքել և՛ ներքին, և՛ արտաքին սպառնալիքներին:

Համապարփակ անվտանգությունն իր մեջ ներառում է ինչպես սոցիալական անվտանգության, այնպես էլ դիմակայունության տարրեր: Սա պայմանավորված է նրանով, որ ազգային անվտանգությունը պահանջում է և՛ ամուր սոցիալական համախմբվածություն, և՛ դիմակայուն համակարգեր: Մարտահրավերների և սպառնալիքների դեպքում սոցիալական անվտանգությունը հոգ է տանում հասարակության կայունության և միասնականության համար, իսկ դիմակայունությունը հոգ է տանում համակարգի՝ կանխատեսելու, հաղթահարելու, արագ վերականգնվելու և ճկուն ադապտացվելու ունակության համար:

3 Համապարփակ անվտանգությունը քաղաքական դիսկուրսում և համապարփակ անվտանգությունը որպես կառավարման մոդել. համեմատական նկարագիր

Համապարփակ անվտանգությունը քաղաքական դիսկուրսում կարող է ուրվագծվել մի քանի չափումների միջոցով, մասնավորապես.

1. Անվտանգության վերաբերյալ հոլիստիկ ընկալում և մոտեցում ենթադրող «ընդարձակ անվտանգությունը» կարող է դրվել քաղաքականությունների և ռազմավարական նշանակության փաստաթղթերի (ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, ՀՀ կիբերանվտանգության ռազմավարություն և այլն) հիմքում:
2. Կայուն և խաղաղ հասարակության զարգացման հիմքում կարող է դրվել «մարդկային անվտանգության» հարթությունը (օրինակ՝ Հայաստանի և Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության մասին կանոնակարգում առկա մարդկային անվտանգության բաղադրիչը):
3. «Համապարփակ պաշտպանությունը» կարող է դառնալ ՀՀ պաշտպանական/ռազմական ռազմավարությունների ելակետն ու շարժիչ ուժը:
4. Ճգնաժամային իրավիճակներում ՀՀ անվտանգային սուբյեկտների պատրաստվածությունը կարող է հենվել համապարփակ անվտանգության սկզբունքների վրա:
5. Համապարփակ անվտանգությունը կարող է դառնալ պետական մարմինների միջև համագործակցության գործառնական ասպեկտ և այլն:

Մինչդեռ, համապարփակ անվտանգությունը կառավարման մոդել ներդնելու պարագայում պետությունը կարողանում է համապարփակ անվտանգությունը տեղափոխել գործառնական դաշտ: **Պատկերավոր ասած, վերոնշյալ 5 (և ավել) կետերը դրվում են գործողության մեջ այնպիսի կառավարման մոտեցման միջոցով, որը ենթադրում է ճգնաժամային իրավիճակներում պատրաստվածության պլանավորման և իրականացման գործընթացում ներգրավված անվտանգային սուբյեկտների (իշխանություններ, գործարար հանրույթ, կազմակերպություններ և քաղաքացիներ) միջև համագործակցություն:** Այլ բառերով, եթե անվտանգության վերաբերյալ հոլիստիկ ընկալում և մոտեցում որդեգրելը կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության կողմից Համապարփակ անվտանգության հայեցակարգի ընդունմանը, և/կամ որոշ ռազմավարական նշանակության փաստաթղթերում այն ամբողջությամբ, կամ դրա որոշ էլեմենտներ ներդնելուն՝ ապա Համապարփակ անվտանգության կառավարման մոդելը՝

- այդ հայեցակարգը կբերի գործառնական դաշտ՝ այն վերածելով գործնական միջոցառումների և փորձառության,

- իր մեջ կներառի սպառնալիքների և անհրաժեշտ պատասխան գործողությունների լայն շրջանակ (կանխարգելիչ միջոցառումներ, ճգնաժամային կառավարում և արագ վերականգնում),

- անհրաժեշտ պատասխան գործողությունների իրականացումը կհենի կառավարման բոլոր մակարդակներում և դրանց միջև համակարգման վրա,

- կորդեգրի երևույթների հաշվառման վրա հիմնված (phenomenon-based approach) մոտեցում **(սույն մոտեցման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ անվտանգային ոլորտում համագործակցության զարգացման շարժիչ ուժը ոչ այնքան ադմինիստրատիվ որոշումներն են, այլ՝ պրակտիկ կարիքները: Սույն մոտեցումը դրդում է անվտանգային ակտորներին աշխատել առավել պատշաճ, ժամանակին և համաչափ կերպով),**

- կհենվի օրենքի գերակայության վրա,

- առանձնահատուկ կընդգծի արտակարգ իրավիճակներում պատրաստվածության հանգամանքը:

Եթե Հայաստանի Հանրապետությունը որդեգրի Համապարփակ անվտանգությունը որպես կառավարման մոդել ընդունելու որոշում, ապա միայն Համապարփակ անվտանգության հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակումն ու ընդունումը, ինչպես նաև Հայեցակարգի սկզբունքները ռազմավարական նշանակության ոլորտային փաստաթղթերում ներառելը բավարար լինել չի կարող: ՀՀ համապարփակ անվտանգության կառավարման մոդելը՝ իր կիզակետում ունենալով ՀՀ համապարփակ անվտանգության հայեցակարգի սկզբունքները և դրանում սահմանված հասարակության համար կենսական նշանակության գործառույթները (առաջնորդություն, միջազգային գործունեություն, պաշտպանական կարողություններ, ներքին անվտանգություն, տնտեսություն, ենթակառուցվածքներ և մատակարարումների անվտանգություն, հոգեբանական դիմակայունություն, բնակչության և ծառայությունների ֆունկցիոնալ կարողություններ և այլն), պետք է հենվի ուղենիշային/բազային ռազմավարական փաստաթղթի վրա:[1] **Սույն բազային ռազմավարական փաստաթուղթը պետք է սահմանի ճգնաժամային իրավիճակներում հասարակության պատրաստվածությունը կառավարող ընդհանուր սկզբունքները և ենթարկվի պարբերական վերանայման, որպեսզի դրանում զետեղված ընդհանուր սկզբունքները պահպանեն իրենց արդիականությունը պետական կառավարման բոլոր մակարդակներում:**

1 | Սույն փաստաթուղթը Ֆինլանդիայում կոչվում է Security Strategy for Society

4 | Ի՞նչ ասել է պատրաստվածություն

Վերոնշյալ կառավարման մոդելի համատեքստում պատրաստվածությունը պետք է ընկալել մի գործունեություն, որը և՛ սովորական պայմաններում, և՛ արտակարգ իրավիճակների պայմաններում տեղի ունեցող խափանումների ժամանակ ապահովում է ՀՀ անվտանգային սուբյեկտների կողմից իրենց վերապահված բոլոր առաջադրանքների կատարումը՝ նվազագույն ընդհատումներով:

Պատրաստվածության միջոցառումները պետք է ներառեն ինչպես արտակարգ իրավիճակների պլանավորում և շարունակականության կառավարում, այնպես էլ նախնական ուսուցում, վերապատրաստում և պատրաստության վարժանքներ: **ՀՀ համապարփակ անվտանգության հայեցակարգով սահմանվելիք հայաստանյան հասարակության համար կենսական նշանակության գործառույթները հիմնարար պետք է լինել պատրաստվածության պլանավորման համար՝ բոլոր գործառնական մակարդակներում:** Այսինքն, ռիսկերի գնահատման վրա հիմնված գործնական առաջադրանքներն ու պարտականությունները պետք է պլանավորվեն այնպես, որ հասարակության համար կենսական նշանակության գործառույթները լինեն ապահովված:

Երբ պատրաստվածությունը հենվում է «համապարփակ անվտանգության» սկզբունքի վրա՝ հասարակության համար կենսական նշանակության գործառույթները համատեղ են կառավարվում իշխանությունների, գործարար հանրույթի, կազմակերպությունների (այդ թվում նաև՝ կրթական հաստատություններ և ուղեղային կենտրոններ) և քաղաքացիների կողմից: Վերոնշյալ բոլոր սուբյեկտները կազմում են Համապարփակ անվտանգության ցանց, և այդ ցանցի շրջանակներում տեղեկատվության փոխանակումը, համատեղ նպատակների և պարտավորությունների սահմանումը իրականացվում է ճկուն եղանակով: Այս մոդելում անվտանգության ապահովման համակարգված աշխատանքներին մասնակցող կամ սերտորեն աջակցող բոլոր սուբյեկտները համարվում են անվտանգության ապահովման սուբյեկտներ: Այս բոլոր սուբյեկտները կենտրոնական դեր են խաղում պատրաստվածության օրենսդրության մշակման, առաջնորդության և զարգացման, ինչպես նաև պատրաստվածության միջոցառումների իրականացման գործում:

5 | Առաջարկություններ

1 Ընդունել համապարփակ անվտանգությունը որպես կառավարման մոդել ներդնելու քաղաքական դիրքորոշում:

2 Համապարփակ անվտանգությունը որպես կառավարման մոդել ներդնելու գործառնական աշխատանքները մեկնարկել ՀՀ համապարփակ անվտանգության հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակման և ընդունման շուրջ տարվող աշխատանքներով: Հայեցակարգում, ի թիվս այլ բաղադրիչների, ներառել համապարփակ անվտանգության սկզբունքները և հայաստանյան հասարակության համար կենսական նշանակության գործառույթների ցանկը:

3 Հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներում ներգրավել անվտանգային ոլորտի բոլոր ակտորներին՝ իշխանություններ, բիզնես հանրույթ, կազմակերպություններ (այդ թվում նաև՝ ուղեղային կենտրոններ, համալսարաններ և այլն), քաղաքացիներ:

4 Հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին զուգահեռ ԱԽ գրասենյակի և ՀՀ վարչապետի աշխատակազմի այլ ստորաբաժանումների կողմից իրականացնել ՀՀ ողջ օրենսդրական դաշտի գույքագրում՝ վերհանելու Համապարփակ անվտանգության հայեցակարգի սկզբունքներին հակոտնյա (ամբողջական կամ մասամբ) փաստաթղթերը:

5 Հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին զուգահեռ, ԱԽ գրասենյակի համապատասխան աշխատակիցներին գործուղել բոլոր պետական կառավարման մարմիններ՝ դաշտային աշխատանքի և հետազոտական գործունեության միջոցով ուսումնասիրելու ներքին օրենսդրական ակտերը և վերհանելու Համապարփակ անվտանգության հայեցակարգի սկզբունքներին հակոտնյա (ամբողջական կամ մասամբ) փաստաթղթերը:

6 4-րդ և 5-րդ կետերի իմպլեմենտացման արդյունքում կատարել համապարփակ վերլուծություն՝ խնդիրների և առաջարկների ներառմամբ: Վերլուծության արդյունքները նախ աշխատանքային կարգով քննարկել ոլորտային մարմինների հետ, այնուհետ ներառել ՀՀ կառավարության և ՀՀ անվտանգության խորհրդի նիստի/երի օրակարգում:

7 4-րդ և 5-րդ կետերի իմպլեմենտացումը զուգորդել համապատասխան միջազգային գործընկերների հետ խորհրդակցական աշխատանքներով:

8 Ըստ 6-րդ կետի արդյունքների՝ մեկնարկել ուղենիշային/բազային ռազմավարական փաստաթղթի շուրջ աշխատանքները: Սույն աշխատանքներում ներագրավել միջազգային համապատասխան գործընկերների:

9 8-րդ կետին զուգընթաց մեկնարկել ողջ օրենսդրական դաշտի վերանայում՝ համապարփակ անվտանգության սկզբունքներին համահունչ: